ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՍՊԱՌՄԱՆ ԱՃԸ ՀՍՍՀ-ՈՒՄ (1970—1975 ԹԹ.)

Ռ. Ե. ՁՈՐԱՆՅԱՆ

Լայն իմաստով ցանկացած օգտակար աշխատանք մարդկանց կարող է ծառայություն մատուցել։ Կ. Մարքսը գրել է.«Ծառայությունը ոչ այլ ինչ է, եթե ոչ այս կամ այն սպառողական արժեքի օգտակար գործողությունը, անկախ նրանից, սպառողական արժեքն ապրանք է, թե աշխատանք»[1]։ Ծառայությունն ինքնին արտադրական և ոչ արտադրական ոլորտների ջրբաժան չափանիշ հանդիսանալ չի կարող։ Այն կարող է լինել ինչպես բուն արտադրության, այնպես էլ դրանից դուրս տեղի ունեցող պրոցեսների արդյունք։ Հասարակական իմաստով «ծառայություն» արտահայտությամբ ընդունված է որոշել այն առանձնահատուկ սպառողական արժեքը, որը մատուցվում է ոչ թե իրերի, այլ գործունեության ձևով[2]։ Այդ տեսակետից ծառայությունների ամբողջ ոլորտը բաժանվում է գործունեության ճյուղերի և ձևերի, որոնք մատուցում են նյութական և ոչ նյութական ծառայություններ։ Ելնելով աշխատանքի ծախսման և արդյունքի բնույթից, անհրաժեշտ է տարբերակել նյութական և զուտ (ոչ նյութական) ծառայությունները[3]։

Նյութական են այն ծառայությունները, որոնց վրա ծախսված աշխատանքը կապված է ոչ թե նյութական բարիքների ստեղծման, այլ փոխանակության, բաշխման և սպառման ոլորտում արդեն առկա պատրաստի արդյունքի հետ։ Այստեղ պետք է նկատի ունենալ ոչ թե առանձին աշխատողների, այլ ամբողջ ձեռնարկության աշխատանքային ծախսումները, այսինքն՝ ամբողջ տնտեսական գործունեությունը։ Նյութական ծառայություն են առևտրական ձեռնարկությունների գործունեությունը, նյութատեխնիկական մատակարարումը, մթերումները, հասարակական սննդի կազմակերպումը և այլն։ Նյութական ծառայություն է նաև տրանսպորտի աշխատողների գործունեությունը[4]։ Վերջինիս առանձնահատկությունն այն է, որ եթե նյութական ծառայության ձեռնարկություններում ծախսվում է աշխատանքի միայն մի մասը, ապա տրանսպորտում՝ ամբողջը։

Զուտ ծառայություններն առարկայական ձև չունեն, ծառայություն մատուցողից առանձնացված չեն և իրենց բաղկացուցիչ մասով չեն մտնում այս կամ այն ապրանքի արժեքի մեջ։ Այս կարգի ծառայություն է պետական կառավարման, հասարակական կարգի պահպանման և պաշտպանության մարմինների, հասարակական կազմակերպությունների, գրականության ու արվեստի, լուսավորության և առողջապահության, գիտության բնագավառներում աշխատողների գործունեությունը և այլն։

---

1 Կ. Մարքս, Կապիտալ, հ. 1, Երևան, 1954, էջ 204։

2 К. Маркс и Ф. Энгельс, Соч., т. 26, ч. 1. стр. 154, 413.

3 К. Маркс и Ф. Энгельс, Соч., т. 26, ч. 1, стр. 149, 414, 420.

4 Կ. Մարքս, Կապիտալ, հ. 2, գիրք 2-րդ, Երևան, 1936, էջ 29։

Ծառայությունների սոցիալ-տնտեսական էության բնութագրման համար սկզբունքային նշանակություն ունեն աշխատանքի հասարակական բաժանման գործում դրանց յուրահատուկ ֆունկցիաները։ Այս առումով տնտեսագիտական գրականության մեջ տարբերակվում են արտադրական, անձնական և հասարակական ծառայությունները, որոնց ոլորտի բոլոր ճյուղերը խմբավորվում են հետևյալ կերպ[5]։ Առաջին՝ արտադրական բնույթի ճյուղեր (բեռնատար տրանսպորտ, արտադրությանը սպասարկող կապ, նյութատեխնիկական մատակարարում, մթերումներ և այլն), երկրորդ՝ անձնական բնույթի ծառայություններ կատարող ճյուղեր, որոնք ստորաբաժանվում են. ա) սպառողական ճյուղերի (մարդատար տրանսպորտ, առևտուր, հասարակական սնունդ, կենցաղային սպասարկում և այլն), բ) մարդու ֆիզիկական և հոգևոր ընդունակությունների զարգացումը կատարելագործող ոչ նյութական արտադրական ճյուղեր (ժողովրդական կրթություն, առողջապահություն, ֆիզկուլտուրա, սպորտ և այլն) և երրորդ՝ սոցիալական ծառայություններ (պետական կառավարում, պաշտպանության մարմիններ, հասարակական կազմակերպություններ և այլն)։

Գիտությունը մատուցում է բազմատեսակ ծառայություններ։ Գիտական հետազոտությունների արդյունքներն օգտագործվում են ամենատարբեր բնագավառներում։ Գիտության վրա ծախսվող միջոցների գերակշռող մասը փոխհատուցվում է կենտրոնացված աղբյուրների հաշվին, ծառայությունների այս ոլորտը կազմում է առանձին խումբ։ Այսպիսով, ծառայություններն ընդգրկում են հասարակական կյանքի թե՛ տնտեսական, թե՛ հոգևոր և թե՛ սոցիալական կողմերը։

Ծառայությունների սպառման աճի լիակատար բացահայտման համար անհրաժեշտ է դրանք քանակական և որակական մանրակրկիտ վերլուծության ենթարկել։ Քննենք սոցիալական ծառայությունների առավել զարգացած ձևերը՝ ժողովրդական կրթությունը և բնակչության բժշկական սպասարկումը (առողջապահությունը)։ Նշված ծառայությունների զարգացումը պայմանավորված է սպառման հասարակական ֆոնդերի միջոցների աճով, որոնց 52%-ը ծախսվում է հենց այդ նպատակով։

Զարգացած սոցիալիստական հասարակարգի արդի փուլում ծավալվող գիտատեխնիկական առաջընթացն ուղեկցվում է արտադրության տեխնիկական ապարատի և տեխնոլոգիական պրոցեսների հիմնավոր փոփոխություններով։ Դրա հետ մեկտեղ փոխվում են նաև աշխատանքի բնույթը և էությունը։ Այսպես, նոր մասնագիտությունների (օպերատորներ, դիսպետչերներ, ծրագրավորողներ և այլն) երևան գալն աշխատողներից պահանջում է արագ կողմնորոշում, սուր հիշողություն, օպերատիվ մտածողություն և երևույթների ընթացքի կանխատեսում։ Սրանց հիման վրա էլ պլանավորվում է աշխատանքային գործունեությունը։

Ծառայությունների սպառման ծավալի վրա մեծ ազդեցություն են գործում դպրոցների ուսումնա-նյութական բազայի ամրապնդումը, ուսուցիչների աշխատավարձի բարձրացումը, սովորողներին զեղչ գներով սննդով ապահովելը և այլն։ Տեխնիկումների և բուհերի նկատմամբ եղած հասարակական պահանջմունքը գնալով ավելի է աճում։ Դա պայմանավորված է մի շարք գործոննե-

[5] «Сфера обслуживания при социализме», М., 1968, стр. 63—64.

րով. նախ՝ արտադրական և ոչ արտադրական ոլորտների ընդլայնումը պահանջում է բարձր որակավորում ունեցող շատ մասնագետներ։ Երկրորդ՝ ներկայումս ծավալվող գիտատեխնիկական հեղափոխությունը կրթության վերելքի համար ավելի շուտ հետևանք է, քան նախադրյալ։ Գնալով մեծանում է բուհերի դերը։ Դրանք, ինչպես հայտնի է, ոչ միայն կադրեր են պատրաստում ժողովրդական տնտեսության և գիտության համար, այլև անմիջականորեն մասնակցում են տեխնիկայի ու տեխնոլոգիայի զարգացմանը։ Հետևապես, քանակական ու որակական առումով բարձրանում է ժողովրդական կրթության բարձրագույն ու միջին օղակների ծառայությունների սպառման նշանակությունը։

Աղյուսակ 1

ՀՍՍՀ սովորողների թիվը ըստ կրթության ձևերի
(ուս. տարվա սկզբին, հազար մարդ)[6]

Ցուցանիշներ	1960—1961 թթ.	1965—1966 թթ.	1970—1971 թթ.	1974—1975 թթ.	1974 թ. %-ներով 1960 թ. համեմատ-մամբ
Հանրակրթական դպրոցների՝ բոլոր ձևերում	338	529	653	688	203,6
Այդ թվում՝					
Տարրական, ոչ լրիվ միջնակարգ և միջնակարգ դպրոցներում	319	499	628	642	201,3
Պրոֆտեխնիկական կրթության ուսումնարաններում և դպրոցներում	5	11	19	22	4,4 անգամ
Միջնակարգ մասնագիտական հաստատություններում	15	31	47	52	3,5 անգամ
Բուհերում	20	39	54	53	265,0
Ձեռք են բերել նոր մասնագիտություն և բարձրացրել իրենց որակավորումը	64	80	134	206	321,9

Սույն աղյուսակից երևում է, որ հանրակրթական դպրոցներում սովորողների թիվը 1974/1975 ուս. տարում, 1960/1961 թթ. համեմատությամբ, ավելացել է ավելի քան 2 անգամ, այդ թվում՝ տարրական, ոչ լրիվ միջնակարգ և միջնակարգ դպրոցների գծով՝ ավելի քան 2 անգամ։ Նույն ժամանակաշրջանում սովորողների թիվը ամբողջ երկրի մասշտաբով ավելացել է 1,4 անգամ[7]։

Այժմ մեծ կարևորություն է տրվում բանվորական բարձրորակ կադրերի պատրաստմանը և, առաջին հերթին, պրոֆտեխնիկական ուսումնարանների ու դպրոցների ցանցի ընդլայնմանը։ 1975 թ. Հայկական ՍՍՀ-ում գործում էր 75 պրոֆտեխնիկական ուսումնարան, որտեղ ընդգրկված էր ավելի քան 35

---

6 «Народное хозяйство Армянской ССР в 1974 г.», Ереван, 1975, стр. 219.

7 «Народное хозяйство СССР в 1970 г.», М., 1971, стр. 633; «Народное хозяйство СССР в 1974 г.», М., 1975, стр. 683.

հազար սովորող, այսինքն՝ 7 անգամ ավելի, քան 1960/1961 ուս. տարում[8]։ 10-րդ հնգամյակում ՍՍՀՄ-ում կպատրաստվի 11 մլն. որակյալ բանվորական կադր։ Ընդ որում, 5 մլն. մարդ կստանան միջնակարգ կրթություն[9]։

Միջնակարգ մասնագիտական հաստատություններում և բուհերում սովորողների թիվը՝ 1960/1961 թթ. համեմատությամբ ավելացել է. այսպես, միջնակարգ մասնագիտական հաստատություններում սովորողների թիվն ավելացել է ավելի քան 3,5, իսկ բուհերի ուսանողներինը՝ 2,7 անգամ։ Դա նշանակում է, որ մեծանում է ժողովրդական տնտեսության պահանջմունքը որակյալ կադրերի նկատմամբ։

Մեր հանրապետությունը 10 հազար բնակչին ընկնող միջնակարգ մասնագիտական հաստատությունների ուսանողների թվով ՍՍՀՄ-ում գրավում է երրորդ տեղը՝ 186 ուսանող, իսկ բուհերի ուսանողների թվով՝ երկրորդ տեղը՝ 191 ուսանող։ Վերոհիշյալ երկու ցուցանիշների գծով էլ մեր հանրապետությունը գերազանցում է Միության միջին մակարդակը[10]։ Սակայն բնակչության պահանջմունքն այս բնագավառում դեռևս լրիվ բավարարում չի ստացել։ Այդ մասին են վկայում բուհերի ընդունելության քննությունների արդյունքները և սոցիոլոգիական հետազոտությունները։

Ժամանակակից պայմաններում մեծ տեսակարար կշիռ ունի ցերեկային ուսուցումը, որովհետև առանց արտադրությունից կտրված ուսուցումը մասնագետի տեսական պատրաստության համար լիակատար հնարավորություն չի ընձեռում։ Բացի այդ, երեկոյան և հեռակա ուսուցման գծով պատրաստվող կադրերն ամբողջ ժողովրդական տնտեսության մասշտաբով չեն բաշխվում և հնարավոր չէ նրանց ուղարկել անհրաժեշտ ճյուղ կամ շրջան։ Մյուս կողմից, ավարտելուց հետո նրանք իրենց հիմնարկություններում և ձեռնարկություններում միշտ չէ, որ կարող են ապահովվել համապատասխան աշխատանքով։

Ելնելով ժողովրդական տնտեսության և շրջանավարտների շահերից, ճիշտ կլինի երեկոյան և հեռակա ուսուցման շրջանավարտներից նրանց, որոնք իրենց հիմնարկություններում և ձեռնարկություններում չեն կարող ապահովվել համապատասխան աշխատանքով, բաշխել հատուկ հանձնաժողովի միջոցով։ Դրա համար անհրաժեշտ է նախօրոք մշակել անցկացվելիք միջոցառումների ծրագիր, հասնել այն բանին, որ ուսուցման վերոհիշյալ ձևերում ընդգրկված ուսանողները համապատասխան կուրսից հետո անցնեն մասնագիտական աշխատանքի։ Անհրաժեշտ է կատարելագործել նաև ուսանողների արտադրական պրակտիկան։

Հանրապետության բուհերում ցերեկային ուսուցման տեսակարար կշիռը գնալով բարձրանում է։ Այսպես, 1974 թ. բուհ ընդունված ուսանողների թիվը 1965 թ. համեմատությամբ ավելացել է 1,3 անգամ, այդ թվում՝ ցերեկային ուսուցման գծով 1,7 անգամ։ Այդ նույն ժամանակաշրջանում շրջանավարտների թիվն ավելացել է 2,5, իսկ ցերեկային ուսուցման գծով՝ 3 անգամ[11]։

Հասկանալի է, որ միաժամանակ ավելանում են բյուջետային ծախսերը։ Կառուցվում են ուսումնական նոր շենքեր, լաբորատորիաներ, ձեռք բերվում նորագույն սարքավորում։ Մեծ հատկացումներ են կատարվում ուսանողների

---

8 «Սովետական Հայաստան», 21. I. 1976։

9 «Правда», 14.XII.1975.

10 «Народное хозяйство СССР в 1974 г.», стр. 693.

11 «Народное хозяйство Армянской ССР в 1974 г.», стр. 231, 233.

բնակ-կենցաղային և նյութական պայմանների բարելավման համար։ Ինչպես հայտնի է, 1972 թ. 25%-ով ավելացավ բուհերի ուսանողների և 50%-ով՝ տեխնիկումների սովորողների կրթաթոշակը։ Մեկ ուսանողի վրա կատարվող ծախսի անընդհատ ավելացման մասին են վկայում երկրորդ աղյուսակի տվյալները։

Փաստորեն, մեր հանրապետությունում տեխնիկումի մեկ սովորողի վրա 1950 թ. ծախսվել է 291, 1960 թ.՝ 300, 1974 թ.՝ 400ռ.։

Աղյուսակ 2

Մեկ ուսանողի բյուջեային հատկացումները ՀՍՍՀ-ում (ռուբ.)[12]

Ցուցանիշներ	1950 թ.	1960 թ.	1974 թ.	1974 թ. տոկոսներով	
				1950 թ. նկատմամբ	1960 թ. նկատմամբ
Միջնակարգ մասնագիտական հաստատության (մեկ ուսանողի հաշվով) .	291	300	400	137,5	133,4
Բարձրագույն ուսումնական հաստատության (մեկ ուսանողի հաշվով) . .	265	594	810	305,7	136,4

1974 թ. հանրապետության միջնակարգ մասնագիտական հաստատությունների վրա ծախսվել է 19, իսկ բուհերի վրա՝ 40 մլն.ռ.[13]։

Աղյուսակը վկայում է, որ ՀՍՍՀ-ում 1950 թ. բուհի մեկ ուսանողի վրա ծախսվել է 265, իսկ 1960 թ.՝ 594 ռ.։ 1974 թ. այդ ծախսումները հասել են 810 ռ. և ավելի քան 3 անգամ գերազանցել 1950 թ. և 1,4 անգամ՝ 1960 թ. մակարդակը։

1974 թ. հանրապետության հանրակրթական դպրոցների վրա ծախսվել է 112,3 մլն. ռ., իսկ մեկ աշակերտի վրա՝ 182,7 ռ.։ Վերապատրաստման կուրսերի վրա ծախսվել է 9,7 հազար ռ.։ Միջին ծախսը մեկ մարդու հաշվով կազմել է 35 ռ.։ Պրոֆտեխնիկական ուսումնարանների սովորողների միջին թիվը 1975 թ. կազմել է 35,0 հազար մարդ, իսկ կատարած հատկացումները՝ 20,3 մլն. ռ., այսինքն՝ մեկ սովորողի վրա ծախսվել է 580 ռ.[14]։

ՍՄԿԿ XXIV համագումարում նշվեց, որ «Մեր ժամանակներում բոլոր ասպարեզների այնպիսի արագ զարգացում է տեղի ունենում, որ երիտասարդ տարիներին ստացած կրթությունը սոսկ դառնում է գիտելիքները շարունակ համալրելու բազա»[15]։ Աշխատավորների կրթական մակարդակի բարձրացումն օբյեկտիվորեն պայմանավորում է նաև նրանց ընդհանուր կուլտուրական աճը։ Սրանք սերտորեն փոխկապված պրոցեսներ են։ Կուլտուր-լուսավորական հիմնարկությունների ծառայություններից օգտվելը մի կողմից օժանդակում է գիտելիքների ամրապնդմանը, մյուս կողմից՝ հնարավորություն ընձեռում խելամիտ և արդյունավետ օգտագործելու ստացած գիտելիքները։

---

12 Ըստ ՀՍՍՀ ֆինանսների մինիստրության տարեկան հաշվետվության նյութերի։

13 «Народное хозяйство Армянской ССР в 1974 г.», стр. 276.

14 Հաշվարկները կատարված են ՀՍՍՀ ֆինանսների մինիստրության տարեկան հաշվետվության նյութերի հիման վրա։

15 «ՍՄԿԿ XXIV համագումարի նյութերը», Երևան, 1971, էջ 114։

Հասարակական առաջընթացի համեմատ աճում է գրականության և արվեստի դերը սովետական մարդու աշխարհայացքի, բարոյաքաղաքական համոզմունքների ու հոգևոր կուլտուրայի ձևավորման մեջ։ Այդ տեսակետից մեծ դեր են կատարում թատրոնը, կինոն, հեռուստատեսությունը, կերպարվեստը, երաժշտությունը, մասսայական ինֆորմացիան և այլն։ Մեր հանրապետությունում թատրոնների թիվը, 1965 թ. համեմատությամբ, 1974 թ. ավելացել է 1,3 անգամ, կինոսարքավորումների թիվը հասել է 758-ի, մասսայական գրադարանների թիվը՝ 1306-ի։ Հանրապետությունում 1974 թ. թանգարան է հաճախել 1423,7 հազար մարդ, 1974 թ. գործել է 35 թանգարան։ 1974 թ. հանրապետության գեղարվեստական ինքնագործունեության կոլեկտիվների անդամ էին 45,8 հազար մարդ[16]։

Հայկական ՍՍՀ-ում ընդլայնվել են մասսայական ինֆորմացիայի տեխնիկական հնարավորությունները, ամրապնդվել նրա նյութական բազան։

Այսպիսով, սովետական մարդկանց հոգևոր պահանջմունքների աճի ու բավարարման մեջ դրսևորվում է ժողովրդական սպառման զարգացման օրինաչափություններից մեկը։

Սովետական մարդկանց առողջապահության և կյանքի միջին տևողության երկարացման խնդիրը միշտ էլ եղել է կուսակցության և կառավարության ուշադրության կենտրոնում։ Ժամանակակից մարդու սոցիալ-տնտեսական պահանջմունքների համակարգում կարևոր բնագավառ է բժշկական սպասարկումը։ ՍՍՀՄ-ում սոցիալական այդ պահանջմունքի բավարարումը կապված չէ ընտանիքի նյութական միջոցների հետ։ Եվ պատահական չէ, որ վերջին քսանամյակում առողջապահությանը և ֆիզկուլտուրային պետական բյուջեից կատարվող հատկացումները զգալիորեն ավելացել են։ Բժիշկների թվով մեր երկիրը աշխարհում գրավում է առաջին տեղը։ ՍՍՀՄ քաղաքացիները բուժվում են անվճար, արտոնյալ պայմաններով օգտվում որոշակի առողջապահական ծառայություններից։ Դժվար չէ պատկերացնել, որ այդ ծառայությունները բավականին ծանր կնստեին բնակչության վրա, եթե պետությունը սպառման հասարակական ֆոնդերի միջոցով դրանց համար պետական հատկացումներ չկատարեր։ Երրորդ աղյուսակի տվյալներից երևում է, որ եթե 1960 թ. այդ նպատակների համար հատկացվել է 33,1 մլն. ռ., իսկ 1970 թ.՝ 87,7 մլն. ռ., ապա 1974 թ. այդ հատկացումները կազմել են 96,1 մլն. ռ. կամ 1960 թ. համեմատությամբ ավելացել 2,9 անգամ։ Տարեցտարի ավելանում են բնակչության մեկ շնչին ընկնող առողջապահական ծախսերը. 1974 թ. դրանք կազմել են 35 ռ.՝ 1960 թ. 18,7 ռ. փոխարեն կամ ավելացել 1,9 անգամ։

Հանրապետությունում զգալիորեն ավելացել է բժիշկների թիվը. 10 հազար բնակչին ընկնող բժշկական միջին անձնակազմի թիվն ավելացել է 1,3, իսկ հիվանդանոցային մահճակալներինը՝ 1,2 անգամ։ Մեր հանրապետությունը 10 հազար բնակչին ընկնող բժիշկների ընդհանուր թվով գերազանցում է ՍՍՀՄ միջին մակարդակը։ Այսպես։ ՍՍՀՄ 10 հազար բնակչին ընկնում է 31,5, իսկ ՀՍՍՀ-ին՝ 33,0 բժիշկ։ Մեր հանրապետությունն այդ ցուցանիշի գծով Միությունում գրավում է հինգերորդ տեղը։ Չնայած դրան, ՀՍՍՀ-ը 10 հազար բնակչին ընկնող հիվանդանոցային մահճակալների ընդհանուր թվով միութենական հան-

---

16 «Народное хозяйство Армянской ССР в 1974 г.», стр. 236, 239.

Աղյուսակ 3

ՀՍՍՀ պետբյուջեի հատկացումները առողջապահությանը և դրա զարգացման հիմնական ցուցանիշները[17]

Ցուցանիշներ	1960 թ.	1965 թ.	1970 թ.	1974 թ.	1974 թ. %-ով 1960 թ. համեմատությամբ
Պետբյուջեի հատկացումները առողջապահությանը և ֆիզկուլտուրային (մլն. ռուբլի)	33,1	52,5	87,7	96,1	290,3
Նույնը բնակչության մեկ շնչի հաշվով (ռուբլի)	18,7	23,5	35,2	35	187
Հիվանդանոցային մահճակալների թիվը 10 հազար բնակչի հաշվով	69,6	79,4	86	86	124
Բնակչության ապահովվածությունը բժիշկներով (10 հազար բնակչի հաշվով)	24,2	26,7	28,8	33	136,4
10 հազար բնակչին ընկնող բժշկական միջին անձնակազմի թիվը . . .	59,5	66	70,2	78,8	132,4
Մահճակալների ընդհանուր թիվը առողջարաններում, պանսիոնատներում և հանգստյան տներում (հազար) . .	4085	5037	7056	10418	255

բապետությունների մեջ գրավում է վերջին տեղը, իսկ բժշկական միջին անձնակազմի ընդհանուր թվով զիջում է մի շարք հանրապետությունների[18]։ Հանրապետության բժշկական հիմնարկներում այժմ աշխատում են ավելի քան 9,4 հազար բժիշկ և ավելի քան 22 հազար միջին բուժաշխատող[19]։

Նշված ժամանակաշրջանում բուժպրոֆիլակտիկ հիմնարկություններն ապահովվել են բժշկական կատարելագործված սարքավորումներով։ Դա հնարավորություն է ընձեռել 1,1 անգամ ավելացնելու ինչպես մասնագետների, այնպես էլ մահճակալների թիվը։

Բնակչության առողջության ամրապնդման համար իրականացվող միջոցառումների համալիրում կարևոր դեր են կատարում առողջարանային-կուրորտային հիմնարկությունները։ Վերջին տարիներին զգալիորեն աճել է հանրապետության առողջարանների, պանսիոնատների և հանգստյան տների մահճակալների ընդհանուր թիվը։ Այսպես, 1960 թ. համեմատությամբ, 1974 թ. 2,6

---

17 «Народное хозяйство Армянской ССР в 1970 г.». Ереван, 1971, стр. 204; «Народное хозяйство Армянской ССР в 1974 г.», стр. 273, 250; «Народное хозяйство СССР в 1970 г.», стр. 693; «Народное хозяйство СССР в 1974 г.», стр. 728, 730, 731, «Սովետական Հայաստանը 50 տարում», Երևան, 1970, էջ 316, 328։

18 «Народное хозяйство СССР в 1974 г.», стр. 728, 730, 731.

19 «Սովետական Հայաստան», 21. I. 1976։

անգամ ավելացել է մահճակալների և 3,3 անգամ հանգստացողների թիվը (հանգստացել և կազդուրվել է 89,7 հազար մարդ)[20]։

Բնակչության առողջական վիճակը կապված է ինչպես մարդու կենսաբանական բնույթի ու շրջապատող արտաքին միջավայրի, այնպես էլ կենսագործունեության սոցիալ-տնտեսական պայմանների հետ և դրա համար էլ այն չի կարելի հասկանալ միայն բժշկական նեղ իմաստով։ Պատահական չէ, որ առողջապահության համաշխարհային կազմակերպության կանոնադրության մեջ առողջությունը դիտվում է ոչ միայն որպես «հիվանդության և ֆիզիկական արատների» բացակայություն, այլ նաև որպես «ֆիզիկական, հոգևոր և սոցիալական լիակատար բարեկեցություն»։ Ավելին, մեր երկրում, ինչպես նշված է «ՍՍՀՄ և միութենական հանրապետություններում առողջապահության զարգացման մասին» 1969 թ. ընդունված կանոնադրական հիմունքներով, առողջությունը ազգային հարստություն է։

Գիտատեխնիկական առաջընթացը բարենպաստ պայմաններ է ստեղծում արտադրության զարգացման և աշխատանքի թեթևացման համար։ Սակայն, մյուս կողմից, այն դեռևս չի կարող վերացնել հիվանդությունների սոցիալական նախադրյալները։ Բուն արտադրության ոլորտում դրանք հանդես են գալիս արտադրական աղմուկի, թունավոր գազերի, իոնային ճառագայթման ազդեցության հետևանքով և այլն։ Խիստ լարված աշխատանքը պահանջում է նյարդային և հոգևոր համակարգի մեծ լարվածություն։ Դրանց հետևանքով առաջացած գերհոգնածությունը «մարդ-մեքենա» համակարգում առաջ է բերում չնախատեսված խախտումներ։ Այդ կապակցությամբ ՍՄԿԿ Կենտկոմը և ՍՍՀՄ Մինիստրների սովետը «Առողջապահության բարելավման և բժշկական գիտության զարգացման հետագա միջոցառումների մասին» որոշում ընդունեցին, որով նախատեսվեց ոչ միայն բուժսպասարկման կատարելագործում, հանդստի կազմակերպված անցկացում, ֆիզկուլտուրայի և տուրիզմի զարգացում, այլ նաև աշխատանքի հիգիենիկ պայմանների ստեղծում, քաղաքների օդային ավազանի մաքրում, բնության պահպանություն և այլն։

Այսպիսով, սովետական մարդկանց կրթության զարգացման և առողջության ամրապնդման հարցերը միշտ գտնվել և գտնվում են կուսակցության և կառավարության ուշադրության կենտրոնում։ Ինչպես ՍՄԿԿ XXV համագումարում նշեց Լ. Ի. Բրեժնևը, «1976—1990 թվականներին երկիրը մոտավորապես կրկնապատիկ շատ նյութական և ֆինանսական ռեսուրսներ կունենա, քան անցած 15 տարում։ Դրանով իսկ նոր հնարավորություններ են ստեղծվում կուսակցության ծրագրով վերջին համագումարների կողմից առաջադրված հիմնական սոցիալ-տնտեսական խնդիրների լուծման համար։ Դա վերաբերում է նախ և առաջ սովետական մարդկանց բարեկեցության նետագա բարձրացմանը, նրանց աշխատանքի և կենցաղի պայմանների բարելավմանը, առողջապահության, կրթության, կուլտուրայի զգալի առաջադիմությանը՝ այն ամենին, ինչը նպաստում է նոր մարդու ձևավորմանը, անհատի համակողմանի զարգացմանը, սոցիալիստական ապրելակերպի կատարելագործմանը»[21]։

---

20 «Սովետական Հայաստանը 50 տարում», էջ 323, «Народное хозяйство Армянской ССР в 1974 г.», стр. 250 .

21 «Սովետական Հայաստան», 25. II. 1976։

РОСТ ПОТРЕБЛЕНИЯ УСЛУГ В АРМ. ССР (1970—1975 гг.).

Р. Х. ЧОБАНЯН

Резюме

Всестороннее развитие личности—одна из главных целей социализма. Фундаментом всестороннего развития личности является удовлетворение потребностей в услугах просвещения и образования. С развитием социалистического общества эта социально-экономическая потребность становится все более настоятельной. Возрастание потребностей в услугах народного образования на современном этапе развитого социализма вытекает как из новых требований производства, так и самого потребления. Рост образовательного уровня трудящихся объективно предполагает и рост их общей культуры. В общей же сложности рост духовных потребностей и их удовлетворение является одним из основных условий всестороннего развития личности.

Вторым важнейшим направлением роста потребления услуг социального характера является медицинское обслуживание населения. Общедоступность и высокий уровень бесплатной лечебной помощи в условиях развитого социализма явление закономерное, ибо забота о народном здоровье, и тем самым, об укреплении дееспособности главной производительной силы общества составляет одну из первостепенных функций советского государства.

Мера потребности использования услуг здравоохранения определяется состоянием здоровья трудящихся, а оно зависит прежде всего от социальной среды—условий жизнедеятельности. Последовательный подъем материального и культурного благосостояния советских людей, а также постоянное улучшение условий труда во все возрастающей мере способствуют воспроизводству физически здорового населения.